HELSINKI CITIZENS ASSEMBLY

2011

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Հաշվետվությունը պատրաստվել և հրատարակվել է Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստանի աջակցությամբ:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպությունների տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

2 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 5

3 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7

4 ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 8

4.1 Իրավական աջակցություն 8

4.1.1 Իրավախորհրդատվություն 8

4.1.2 Ռազմավարական դատավարություններ 9

4.2 Մոնիթորինգներ/ Տեղեկատվության հավաքագրում (fact finding mission) 10

4.2.1 Արդար դատաքննության իրավունք 10

4.2.2 ՁԼՄ/այլ աղբյուրներ 11

4.2.3 Պետական ծախսեր 11

4.2.4 Պետական ծրագրերի իրականացում 12

4.2.5 Արագ արձագանքում 13

4.3 Օրենսդրական նախաձեռնություններ 14

5 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 16

5.1 Լուսաբանում 16

5.2 Հանրային միջոցառումներ 17

5.3 Դասընթացներ, փորձի փոխանակում 19

6 ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

7 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՅԳԻ 24

8 ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 25

9 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ 27

10 ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 28

11 ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ 32

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի (այսուհետ՝ ՀՔԱ) Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին՝ որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, որպես առանձին կազմակերպություն՝ գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին՝ ՀՀ արդարադատության նախարարությունում:

Կազմակերպության գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոնում՝ Վանաձոր քաղաքում: Կազմակերպությունը ներկայացուցչություններ ունի Լոռու մարզի Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան և Սպիտակ քաղաքներում:

Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է, ըստ առանձին ծրագրերի և գործողությունների, ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը: Վերջին հինգ տարիների ընթացքում գործողությունների զգալի մասն ընդգրկել է հանրապետության հյուսիսային շրջանները:

Կազմակերպության գործունեության հիմնական բնագավառներն են՝ մարդու իրավունքները, շահերի պաշտպանությունը և խաղաղասիրությունը:

Իր գործունեությունն իրականացնելիս Կազմակերպությունը ելնում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի, նորմերի տեղայնացման և պաշտպանության անհրաժեշտությունից:

2011 թվականի ընթացքում Կազմակերպությունն իրականացրել է 3 եռամյա, 3 կարճաժամկետ ծրագրեր, իսկ 2009 և 2010 թվականներից սկսված ևս 3 ծրագրեր շարունակվել են իրականացվել: Վերոհիշյալ ծրագրերի իրականացմանը ներգրավված են եղել 23 հաստիքային աշխատակիցներ և շուրջ 30 ծառայություններ մատուցող փորձագետներ և մոնիթորներ:

Երկարաժամկետ ծրագրերն են՝

ա) «Երիտասարդների ներգրավումը Հարավային Կովկասի իրավապաշտպանական շարժման մեջ», որը ֆինանսավորվում է The National Endowment for Democracy/NED ֆոնդի կողմից: Ծրագրի նպատակն է՝բարձրացնել երիտասարդների դերը իրավապաշտպանական շարժման մեջ:

բ) «ՀՀ ոստիկանության համակարգի բարեփոխումներ», որը ֆինանսավորվում է Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի կողմից: Ծրագրի նպատակն է՝ խոշտանգումների, դաժան և անմարդկային վերաբերմունքի կանխարգելումը ՀՀ ոստիկանության բաժիններում մարդու իրավունքների մոնիթորինգների իրականացման միջոցով, ինչպես նաև այդ վերաբերմունքից տուժածներին իրավական աջակցության տրամադրումը:

գ) «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացում», որը ֆինանսավորվում է Բաց Հասարակության Հիմնադրամների Նյու Յորքի և Բուդապեշտի գրասենյակների կողմից: Ծրագրի նպատակն է՝ապահովել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կարողությունների զարգացումը՝ ծրագրային գործողությունների իրականացման միջոցով:

Կարճաժամկետ ծրագրերն են՝

դ) «Նախադեպային իրավունքն արդարադատության իրականացման գործընթացում», որը ֆինանսավորվում է Քաուսթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից: Ծրագրի նպատակն է՝ նախադեպային իրավունքի ամփոփման արդյունքում նպաստել արդարադատության իրականացմանը:

ե) «Իմացի՛ր քո իրավունքները», որը ֆինանսավորվում է Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ-ի կողմից: Ծրագրի նպատակն է՝ զինծառայողներին և զորակոչիկներին իրազեկել իրենց իրավունքների մասին:

զ) «ՀՀ քրեական քաղաքականության բարեփոխումների առաջարկություններ մարդու իրավունքների համատեքստում», որը ֆինանսավորվում է Քաուսթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից: Ծրագրի նպատակն է՝ օրենսդրության և/կամ պրակտիկայի փոփոխության արդյունքում նպաստել քրեական քաղաքականության բարեփոխումներին, որոնց իրականացման համար անհրաժեշտ է մարդու իրավունքների բնագավառում առկա հիմնախնդիրների խորքային վերլուծություն և դրանց իրավունքների խախտումների պատճառների վերհանում:

Նախորդ տարիներին սկսված և 2011 թվականին շարունակվող ծրագրերն են՝

է) Զարգացման համագործակցության միջեկեղեցական կազմակերպության (ICCO) կողմից ֆինանսավորվում է «Քաղաքացիական վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ» (իրականացումը սկսվել է 2009 թվականից): Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել ՀԿ-ների փորձագետների կարողությունները զինված ուժերի հասարակական վերահսկողության բնագավառում՝ նպաստելով ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների, հատկապես մահացության դեպքերի վիճակագրության ձևավորմանը և դրանց բացահայտման ուղղությամբ քննության արդյունավետության բարձրացմանը, պաշտպանության բնագավառի թափանցիկության, և հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը և միջազգային պարտավորությունների շրջանակներում ՀՀ զինված ուժերի բարեփոխումների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողության ձևավորմանը:

ը) «Վկաների պաշտպանություն» (իրականացումը սկսվել է 2010 թվականից), որն իրականացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի նպատակն է՝ գնահատել, թե վկաների իրավունքները որքանով են ապահովված Հայաստանում առկա օրենսդրության և պրակտիկայի տեսանկյունից, միևնույն ժամանակ բացահայտել վկաների լիարժեք պաշտպանության ապահովումը խոչընդոտող հանգամանքները:

թ) «Կարողությունների զարգացում նյարդահոգեբուժական հաստատություններում մարդու իրավունքների մոնիթորինգի իրականացման համար» (իրականացումը սկսվել է 2009 թվականից), որը ֆինանսավորվում է Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստանի և Բուդապեշտի գրասենյակների կողմից: Ծրագրի նպատակն է՝ աջակցել խոշտանգումների դեմ պայքարում Եվրոպական կոնվենցիայով նախատեսված կանխարգելիչ միջոցառումների կայացմանը:

2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2010 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մշակել է Կազմակերպության 2011-2015 թթ. ռազմավարությունը, որում ձևակերպվել են ռազմավարական նպատակները և խնդիրները.

Մարդու իրավունքներ

- Օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը միջազգային չափանիշներին քաղաքական, քաղաքացիական և սոցիալական իրավունքների պաշտպանության բնագավառներում
- Մարդու իրավունքների վկաների ինստիտուտի ներդրում

Քաղաքացիական նախաձեռնություն և շահերի պաշտպանություն

- Հասարակական մասնակցային մեխանիզմների խթանում
- Մարդու իրավունքների պաշտպանության, խաղաղասիրության և քաղաքացիական նախաձեռնությունների աջակցության նպատակով շահերի պաշտպանության քաղաքականության մշակում և իրականացում

Խաղաղասիրություն

- Ռազմականացման մակարդակի նվազեցման նպաստում
- Քաղաքացիների խաղաղասիրական պոտենցիալի հզորացում
- Մեկուսացված[1] հասարակությունների միջև փոխվստահության և երկխոսության զարգացում:

1 Սույն ռազմավարության մեջ մեկուսացված հասարակություն ասելով նկատի է առնվում կոնֆլիկտի մեջ գտնվող ոչ-ությունների հասարակությունները

3. 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2011 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, հիմք ընդունելով Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստանի գրասենյակի կողմից իրականացված գնահատման արդյունքները, ինչպես նաև Կազմակերպության կողմից իրականացվող կարողությունների զարգացման ծրագրի ուղղությունը, նախաձեռնեց մի շարք ինստիտուցիոնալ փոփոխություններ: Մասնավորապես, Կազմակերպությունն ընդունեց նոր կառուցվածք, պարտականությունների հստակ բաշխում տեղի ունեցավ աշխատակիցների միջև, ինչի արդյունքում իրականացվեց աշխատակիցների մասնագիտացում՝ ըստ ուղղությունների: Իրավախորհրդատվության բաժինը ներկայումս քաղաքացիների ընդունելություն է իրականացնում առանձնացված տարածքում՝ ապահովելով իրավախորհրդատվության կոնֆիդենցիալությունը: Ձևավորվել է Կազմակերպության խորհուրդը, որի կազմում են Ագնեշկա Կլասովսկան (Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ, Լեհաստան), Պասկալ Բոկկերսը (Ակցիա սովի դեմ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ), Ջիգֆրիդ Վոեբերը (ԵԱՀԿ քարտուղարության կոնֆլիկտների կանխարգելման կենտրոն), Արմեն Սարգսյանը (Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ), Քրիստ Մարուքյանը (տեղական փորձագետ):

4. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

4.1 Իրավական աջակցություն

4.1.1 Իրավախորհրդատվություն

2011 թվականի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 611 քաղաքացու տրամադրվել է իրավախորհրդատվություն, որից 270-ը կրել է գրավոր բնույթ, իսկ 341-ը՝բանավոր: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցչություններում՝ Ստեփանավան (40), Սպիտակ (164), Ալավերդի (54), Տաշիր (18) քաղաքներում, իրավախորհրդատվություն է տրամադրվել 276 քաղաքացու: Կազմակերպության կողմից տրամադրված գրավոր և բանավոր խորհրդատվությունների 45%-ը ունեցել է դրական արդյունք, իսկ գործերից մոտ 55%-ը դեռևս ընթացքի մեջ է: Ըստ խորհրդատվության արդյունքների՝ 2011 թվականի ընթացքում պետական մարմինների կողմից հիմնականում խախտվել են.

- խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը,
- զորակոչիկների իրավունքները՝կապված առողջության պահպանման հետ,
- սոցիալական ապահովության իրավունքը,
- աշխատանքային իրավունքը,
- արտահայտվելու /տեղեկատվություն ստանալու/ իրավունքը,
- ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը,
- սեփականության իրավունքը,
- արդար դատաքննության իրավունքը:

2011 թ. ընթացքում իրավախորհրդատվության դիմած քաղաքացիներից 8-ը հետագայում հրաժարվել է գործը շարունակել տարբեր պատճառներով, իսկ 2 դեպքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակն է հրաժարվել գործը շարունակել: Առաջին դեպքում անձը համաձայնության է եկել ոստիկանության հետ, իսկ երկրորդ դեպքում քաղաքացու կողմից տրամադրված տեղեկատվությունը եղել է անարժանահավատ:

Կազմակերպություն դիմած քաղաքացիների խնդիրները հիմնականում առնչվել են (իրավունքների խախտող են հանդիսացել) հետևյալ մարմիններին.

- Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե,
- Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով,
- Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն,
- Ընդհանուր իրավասության դատարան, Վարչական դատարան,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- ՀՀ առողջապահության նախարարություն,
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն,

- ՀՀ պաշտպանության նախարարություն,
- ՀՀ ֆինանսների նախարարություն,
- Նոտարական գրասենյակ,
- Ոստիկանություն,
- Սոցիալական ապահովություն՝ գործազրկության և կենսաթոշակների նպաստներ,
- Տեղական ինքնակառավարման մարմիններ:

4.1.2 Ռազմավարական դատավարություններ

2010-2011 թվականների ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել է ռազմավարական նշանակություն ունեցող 41 գործ, որից 2010 թ. ընթացքում նախաձեռնված ռազմավարական նշանակություն ունեցող 22 գործ վերաբերել է.

- խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքին՝ 2 գործ,
- տեղեկատվություն ստանալու /արտահայտվելու/ իրավունքին՝ 5 գործ,
- սեփականության իրավունքին՝ 5 գործ,
- կյանքի իրավունքին՝ 3 գործ,
- արդար դատաքննության իրավունքին՝ 5 գործ,
- համայնքի ավագանու որոշման վիճարկմանը՝ 2 գործ:

2011 թվականի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից նախաձեռնվել են ռազմավարական նշանակություն ունեցող 19 գործ, որոնք վերաբերել են.

- ազատ տեղաշարժի, ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքին՝ 2 գործ,
- տեղեկատվություն ստանալու /արտահայտվելու/ իրավունքին՝ 1 գործ,
- արդար դատաքննության իրավունքին՝ 2 գործ,
- կյանքի իրավունքին՝ 1 գործ,
- պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցմանը՝ 7 գործ,
- զինծառայողների և զորակոչիկների իրավունքներին՝ 4 գործ,
- ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքին՝ 1 գործ,
- աշխատանքային իրավունքին՝ 1 գործ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մինչ այժմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացրել է 4 գործով գանգատներ, որոնք վերաբերում են.

- խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու իրավունքին՝ 2 գործ,
- սեփականության իրավունքին՝ 1 գործ,
- տեղեկատվություն ստանալու /արտահայտվելու/ իրավունքին՝ 1 գործ:

4.2 Մոնիթորինգներ/ Տեղեկատվության հավաքագրում (fact finding mission)

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գասենյակն իր գործունեության մեջ լայնորեն կիրառում է մոնիթորինգները և տեղեկատվության հավաքագրումը՝ որպես արդյունավետ գործիք: Մասնավորապես, փաստահավաք գործունեություն է ծավալվել հետևյալ բնագավառներում և ուղղություններով:

4.2.1 Արդար դատաքննության իրավունք

2011 թ. մայիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի թվով 9 դատարաններում իրականացվել է «Թմրամիջոց գործածող անձանց արդար դատաքննության իրավունքի մոնիթորինգ», որը ներառել է թմրամիջոցի ապօրինի շրջանառության մեջ մեղադրվող անձանց գործերով նախաքննության և դատաքննության ընթացքի ուսումնասիրություն: Մոնիթորինգի նպատակն է՝ պարզել՝ որքանով են պաշտպանվում թմրամիջոց գործածող անձանց իրավունքները նրանց նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում: Մոնիթորինգն իրականացվել է նախապես վերապատրաստված 10 մոնիթորների կողմից:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ մեղադրվող անձանց «Արդար դատաքննության իրավունքի մոնիթորինգն իրականացվել է 65 քրեական գործի՝ 248 դատական նիստի շրջանակում, որից 48 գործ կայացել է ընդհանուր դատաքննության կարգով, 17-ը՝ արագացված: Դատական նիստերի մոնիթորինգի արդյունքում արձանագրվել են մի շարք խախտումներ, մասնավորապես՝ 248 դատական նիստից նախատեսված ժամին սկսվել է միայն 23-ը, մյուս 225 դատական նիստերն սկսվել են 10 րոպեից մինչև 1 ժամ 40 րոպե ուշացումով: 3 վկայի նկատմամբ դատաքննության փուլում ճնշում է գործադրվել նախագահող դատավորի, մեղադրող դատախազի և պաշտպանի կողմից: 6 գործով դատաքննության փուլում պարզվել է, որ նախաքննության փուլում խախտվել է ամբաստանյալների արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես՝ ապացույցները ձեռք են բերվել անթույլատրելի եղանակով: Ամբաստանյալներից 3-ը հայտարարել են, որ ենթարկվել են բռնության, սպառնալիքի, նրանցից ցուցմունքներ են կորզվել, սակայն դատարանը նշված գործերով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի չի ճանաչել, ամբաստանյալների նկատմամբ կիրառված բռնության փաստի առթիվ նոր քննություն չի իրականացրել:

Նախաքննության մոնիթորինգն իրականացվել է 12 փաստաբանների կողմից լրացված քարտերի ամփոփման միջոցով՝ 47 գործի շրջանակներում: Նախաքննության մոնիթորինգի արդյունքում արձանագրվել են տարաբնույթ խախտումներ, մասնավորապես՝ 12 գործով ապացույցները ձեռք են բերվել անթույլատրելի եղանակով, 13 գործով դատախազն առանց հիմնավորման մեղադրական եզրակացության մեջ առարկել է արագացված կարգ կիրառելու դեմ, 2 դեպքում մեղադրյալ/կասկածյալի նկատմամբ կիրառվել է ֆիզիկական բռնութ-

յուն, 6 դեպքում՝ սպառնալիք, վիրավորանք, անմարդկային վերաբերմունք: 8 գործով մեղադրյալ/կասկածյալը բերման է ենթարկվել և ոստիկանությունում պահվել է օրենքով սահմանված 3 ժամից ավելի:

4.2.2 ՁԼՄ/այլ աղբյուրներ

4.2.2.1. 2011 թվականի փետրվար-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացրել է զանգվածային լրատվության միջոցների մոնիթորինգ՝ նպատակ ունենալով բացահայտել **պացիենտների՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող և թմրամիջոց գործածող անձանց իրավունքների վիճակը** Հայաստանում՝ ըստ պաշտոնական և ոչ պաշտոնական 26 լրատվական միջոցների: Մոնիթորինգի ընթացքում հավաքագրվել են պացիենտների վերաբերյալ տարածված 1226 նյութ, որոնք հիմնականում վերաբերում են թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը /820/, պացիենտների կողմից կատարված հանցագործություններին /81/, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող զորակոչիկներին, զինծառայողներին /67/ և այլն: Մոնիթորինգի արդյունքում արձանագրվել են 279 խախտումներ: Այսպես, 264 նյութի միջոցով խախտվում է պացիենտների մասնավոր կյանքի և գաղտնիության իրավունքը, ինչը բոլոր դեպքերում դրսևորվում է այս անձանց անձնական տվյալների հրապարակայնացմամբ: Նյութերից 6-ը արձանագրում է զինծառայողների, 5-ը՝ արդար դատաքննության, 2-ը՝ խոշտանգումներից, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, 1-ը՝ տեղեկատվության ազատության, 1-ը՝ որակի ստանդարտների պահպանման իրավունքների խախտման դեպքեր:

4.2.2.2. 2011 թվականին Կազմակերպության խաղաղասիրական բաժնի կողմից իրականացվել է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների խախտման փաստերի արձանագրում, համապատասխան տեղեկատվության հավաքագրում՝ պաշտպանական գերատեսչությանը և նրա ստորաբաժանումներին ուղղված 20 տեղեկատվության հարցումների, նամակների, դիմումների միջոցով: Ավելին, զինծառայողներից, զորակոչիկներից և նրանց հարազատներից տեղեկատվության ստացման, ինչպես նաև իրավական աջակցություն տրամադրելու նպատակով կազմակերպվել են այցելություններ:

Միևնույն ժամանակ 2011 թվականին իրականացվել է լրատվական միջոցների մոնիթորինգ, որի արդյունքների հիման վրա կազմվել է 2011 թվականին ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի վիճակագրությունը, հավաքագրվել է մահացության դեպքերի հանգամանքների նկարագրությունները, դրանց բացահայտման վերաբերյալ քննության ընթացքը:

4.2.3 Պետական ծախսեր

4.2.3.1. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, կարևորելով մարդու իրավունքների պաշտպանության գործում **պացիենտների բուժման և խնամքի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովումը, իրականացրել է պետական բյու-**

ջեի մոնիթորինգ՝ նպատակ ունենալով բացահայտել ՀՀ պետական քաղաքականությունը, պացիենտների արժանապատիվ կենսագործունեության ապահովման համար հատկացվող ֆինանսական միջոցները: Մոնիթորինգի արդյունքում ստացվում է, որ պացիենտների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների մատուցման ծավալները կախված են առողջապահական բյուջեի մեծությունից: Փաստացի, պացիենտների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների համար 2008 թ. հատկացվել է 1,535,860.70, 2009-ին՝ 1,761,442.80, 2010-ին՝ 1,619,869.60 ՀՀ դրամ, ինչը կազմում է առողջապահական բյուջեի տարեկան մոտ 2.8%-ը: Պետությունը պացիենտների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների համար ֆինանսավորում է սահմանված դրույքների համաձայն՝ հիվանդ/օրով, մահճակալ/օրով, դեպքերով և այլ դրույքաչափերով: Այսպես, կախված մատուցվող ծառայության տեսակից՝ մեկ մահճակալի օրվա գինը կազմում է 3750-ից մինչև 6600 դրամ՝ քրոնիկ հոգեկան հիվանդի խնամք՝ 3750 (Չ/Մ[2] - օր), հետազոտում հիվանդանոցային պայմաններում ախտորոշման նպատակով՝ 3750 (Չ/Մ - ախտորոշում), հոգեբուժական սուր դեպքերի բուժում՝ 5900 (Չ/Մ - դեպք), նարկոլոգիական հիվանդների բուժում՝ 6600 (Չ/Մ - դեպք) և այլն: Այս գումարը ներառում է աշխատակազմի աշխատավարձը, դեղորայքը, սնունդը և մնացած ծախսերը: Ուսումնասիրության արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ծառայությունների մատուցման համար հատկացվող պետական ֆինանսների պլանավորման փուլում առկա են օրենսդրության բացեր: Միջոցները պլանավորվում են ոչ թե հիմք ընդունելով փաստացի հիվանդների թիվը, այլ առկա ֆինանսական միջոցները, որը ծառայության հասանելիության համար խոչընդոտներ է առաջացնում և կարող է կրել կոռուպցիոն ռիսկեր: Ծառայությունների մատուցման տնտեսական արդյունավետության տեսակետից բացակայում են հստակ չափորոշիչներ, որոնք հնարավորություն կընձեռեն գնահատել ինչպես հատկացված ֆինանսական միջոցների ծախսման արդյունավետությունը, այնպես էլ մատուցված ծառայությունների որակը:

4.2.4 Պետական ծրագրերի իրականացում

4.2.4.1. Ոստիկանություն-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում բարեփոխումների իրականացումը դիտարկելու նպատակով ուսումնասիրվել է **ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագիրը:** Տեղեկատվություն է հավաքագրվել ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ մամուլի հաղորդագրություններից, օրենսդրական փոփոխություններ նախատեսող միջոցառումների մասին՝ համապատասխան պաշտոնական հրապարակումներից: 2011 թվականի նոյեմբերին Կազմակերպությունը հարցում է ուղարկել ՀՀ ոստիկանություն, որը ներառել է հարցադրումներ Ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագրի՝ մարդու իրավունքների, ներառյալ ՀՀ ոստիկանության աշխատակիցների պաշտպանության վրա ուղղակի ազդեցություն ունեցող մի շարք միջոցառումների մասին: Ի պատասխան նշված գրության ՀՀ ոստիկանության շտաբը հայտնել է, որ տեղեկատվություն չի կարող տրամադրվել, քանի որ դրա մի մասը վերաբերում է պետական կամ օրեն-

[2] Չափման միավոր

քով պահպանվող այլ գաղտնիք պարունակող իրավական ակտերին, իսկ մյուս հարցադրումների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրել՝ պատճառաբանելով, որ տվյալ պահին ծրագիրը գտնվում է ամփոփման փուլում: Ծուրջ մեկ ամիս հետո ոստիկանության պաշտոնական կայքէջում տեղադրվել են ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թթ. բարեփոխումների ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի[3], ինչպես նաև ՀՀ ոստիկանության կողմից 2011 թ. ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների լուծման ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից տարված աշխատանքների վերաբերյալ[4] հաշվետվությունները:

4.2.4.2. Կազմակերպությունը 2011 թվականին իրականացրել է «**2009-2012 թվականների ընթացքում Հայաստան Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի**» մոնիթորինգ, ուսումնասիրելու համար, թե ծրագիրը որքանով է անդրադառնում թմրամիջոց գործածող անձանց իրավունքների պաշտպանությանը, ծրագրով նախատեսված միջոցառումներն ինչպես են իրականացվում և որքանով է ծրագիրն ազդում իրավիճակի դրական փոփոխության վրա: Ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցը ընդգրկում է ընդհանուր թվով 87 միջոցառում, որոնցից գերակշիռ մասը ուղղված են օրենսդրական փոփոխություններին, մեթոդական ձեռնարկների, ուսումնական նյութերի կազմմանն ու կրթական ծրագրերի իրականացմանը, ընթացակարգային փոփոխություններին, ավելի թիչ են հետևյալ բնույթի միջոցառումները՝ վերլուծությունների իրականացում, ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացում, հանրային իրազեկման գործողություններ, մասնագիտական կարողությունների զարգացում ու նյութատեխնիկական պայմանների բարելավում և տեղեկատվության կառավարում: Ծրագրի միջոցառումների իրականացման համար պատասխանատու են ընդհանուր թվով 14 պետական հաստատություններ և մարմիններ: Կազմակերպության կողմից ծրագրի կատարման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման համար պատասխանատու մարմիններ ուղարկվել են համապատասխան տեղեկատվության հարցումներ: Այդ հարցումների պատասխանների ամփոփման արդյունքում պարզ է դարձել, որ 17 միջոցառումներից, որոնք պետք է կատարվեին մինչև 2012 թ., որպես այդպիսին կատարվել է ընդամենը 8-ը: Ինչ վերաբերում է մյուս միջոցառումներին, նրանց կատարման ժամանակահատվածը, ըստ ժամանակացույցի, նախանշված է 2010-2012 թթ., ինչի արդյունքում միջոցառումները համարվում են ընթացիկ:

4.2.5 Արագ արձագանքում

2011 թվականի ընթացքում Կազմակերպության աշխատակիցներն իրականացրել են ընդհանուր թվով 39 արագ արձագանքում, որից

- 20 դեպքում դիտարկվել է քաղաքացիների ազատ տեղաշարժի ապահովումը, մասնավորապես, թե արդյոք ընդդիմության հանրահավաքների

[3] http://www.police.am/am/aycer/1180-2010-12-15-21-49-01

[4] http://www.police.am/am/aycer/6106--2011-

օրերին հանրային տրանսպորտն աշխատել է անխափան և մայրաքաղաք տանող մայրուղին արգելափակված չի եղել ոստիկանության կողմից,
- 2 դեպքում դիտարկվել է վարորդների ազատ տեղաշարժի սահմանակումը, ովքեր ցանկացել են մասնակցել հանրային բողոքի ակցիային,
- 5 դեպքում այցելություն է իրականացվել քաղաքացիների ահազանգի հիման վրա՝ կապված նրանց դեմ հարուցված քրեական գործերի կամ ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների առնչությամբ,
- 12 դեպքում իրավական աջակցություն է տրամադրվել կապված զինծառայողների, զորակոչիկների կամ զորացրվածների իրավունքների խախտման դեպքերի հետ, որից 5-ը՝ այցելությունների միջոցով:

4.3 Օրենսդրական նախաձեռնություններ

2011 թ. ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մշակել է օրենսդրական առաջարկությունների փաթեթներ՝ ուղղված թվով 7 օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելուն՝հոգեկան առողջության խնդիրներ ունեցող և թմրամիջոց գործածող անձանց իրավունքների պաշտպանության բարելավման նպատակով: Փոփոխություններ առաջարկվում են իրականացնել.

- ՀՀ քրեական օրենսգրքում,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում,
- «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծում,
- «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքում,
- ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 20-ի N 424-Ն որոշման մեջ,
- «ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 25.12.1998 թ. N 821 ՀՀ կառավարության որոշման մեջ,
- ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1599-Ն որոշմամբ հաստատված «Թմրամոլների նկատմամբ բժշկական դիտարկման և նրանց հաշվառման կարգը հաստատելու մասին» որոշման մեջ:

Կազմակերպության կողմից մշակված օրենսդրական առաջարկություններն առանձնացվել են ըստ ուղղությունների և 3 առանձին փաթեթներով ներկայացվել են ՀՀ ԱԺ համապատասխան հանձնաժողովներին 2011 թվականի աշնանային նստաշրջանի ընթացքում:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից մշակված պացիենտների իրավունքներին առնչվող առողջապահության բնագավառում օրենսդրական փոփոխությունների/լրացումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթները ներկայացվել են ՀՀ ԱԺ Առողջապահության, մայրության և մանկության հարցերով հանձնաժողովին և ՀՀ ԱԺ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին:

Հանդիպումը կազմակերպվել էր Քաունթերփարթ ինթերնեշնլի և ԱՄՆ ՄՋԳ Հայաստանի առողջապահական համակարգի հզորացում (HS-STAR) ծրագրի համագործակցությամբ 2011 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրականացված «Օրենսդրական օրակարգի քննարկման օր» նախաձեռնության շրջանակներում:

ՀՀ Ազգային ժողովի 2011 թ. աշնանային նստաշրջանին ընդառաջ կազմակերպված աշխատանքային հանդիպման ընթացքում ՀՀ ԱԺ Պետական-ի-

րավական հարցերի մշտական հանձնաժողովին է ներկայացվել օրենսդրական առաջարկությունների փաթեթ

- ՀՀ քրեական օրենսգրքում,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում,
- ՀՀ ընտանեկան օրենսգրքում,
- «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակահատվածում ՀՀ ԱԺ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին է ներկայացվել «Խղճի և կրոնական ազատությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի մեջ փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների փաթեթ:

ՀՀ ԱԺ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ հանդիպում-քննարկումները համակարգվել են Մարդու իրավունքների ցանցի կողմից /Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան/:

2011 թ. դեկտեմբերի 13-ին Կազմակերպությունը մասնակցել է ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի կողմից Հայաստանում Եվրոպական միության խորհրդատվական խմբի աջակցությամբ ՀՀ Ազգային ժողովում կազմակերպված ՀՀ ազգային անվտանգության խորհրդի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից մշակված «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության» նախագծի վերաբերյալ խորհրդարանական հանրային լսմանը: Հանդիպման ընթացքում «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության» վերաբերյալ Կազմակերպության կարծիք/առաջարկությունները ներկայացվել են բանավոր: Գրավոր առաջարկները ներկայացվել են 2012 թ. հունվարին:

Դեռևս 2004 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մշակել էր «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը 2005 թվականին պաշտոնական շրջանառության մեջ էր դրվել ՀՀ ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի կողմից: Հետագայում անհրաժեշտություն առաջացավ օրենքի նախագիծը համապատասխանեցնել Կարմիր Խաչի Միջազգային կոմիտեի կողմից մշակված «Անհայտ կորածների մասին» տիպային օրենքի սկզբունքներին: Այդ իսկ պատճառով 2010 թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ ձևավորվեց աշխատանքային խումբ Կարմիր Խաչի Միջազգային կոմիտեի պատվիրակության, ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ նախագահի աշխատակազմի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչների ներգրավմամբ: Օրենքի նախագծի մշակման աշխատանքները շարունակվեցին 2011 թվականի ընթացքում, և օրենքի նախագիծը ներկայացվեց միջգերատեսչական հանձնաժողովին եզրակացության ստացման նպատակով:

5. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

5.1 Լուսաբանում



2011 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կայքէջում տեղադրվել է ընդհանուր թվով 474 նյութ, որից 299-ը վերցված է այլ լրատվական էջերից, իսկ 175 նյութ պատրաստվել է Կազմակերպության կողմից: Տեղադրված 474 նյութը վերաբերել են արդար դատաքննությանը (171 նյութ), զինված ուժերին (83 նյութ), ոստիկանությանը (77 նյութ), զինծառայողների իրավունքներին (59 նյութ), քրեակատարողական հիմնարկներին (37 նյութ):

Կազմակերպության կայքէջի այցելությունների վերլուծության արդյունքում ստացվում է հետևյալ պատկերը.



Միևնույն ժամանակ ներկայացվում է կայքէջի այցելություններն ըստ երկրների.



5.2 Հանրային միջոցառումներ

Կազմակերպությունը 2011 թվականի ընթացքում իրականացրել է հետևյալ հանրային միջոցառումները.

4 մամուլի ասուլիս

- «Արթիկ» ՔԿՀ-ում պահվող դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի արտաքին աշխարհի հետ շփման՝ նամակագրության և ՔԿՀ-ի վարչակազմի միջոցով դիմումների ներկայացման իրավունքի իրացման վերաբերյալ
- Տիգրան Փոստանջյանի գործի վերաբերյալ
- «Ա1+» հեռուստաընկերությանը «Ժողովրդական հեռուստատեսություն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների աջակցության վերաբերյալ
- Մանվել Հազրոյանի գործի վերաբերյալ

6 քննարկում

- Բրիտանական ֆիլմերի փառատոնի շրջանակներում «Կինոն և հասարակությունը» թեմայով
- Երկու աշխատանքային քննարկում «Նախադեպային իրավունքն արդարադատության իրականացման գործընթացում» ծրագրի շրջանակներում
- Հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունների ներկայացումը թուրք և ամերիկացի երիտասարդներին
- ՀՀ սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը
- «Երիտասարդների մասնակցությունը վիրտուալ և միջմշակութային երկխոսության միջոցով» թեմայով

2 շնորհանդես

- «Վկաների պաշտպանությունը. ուսումնասիրություն» զեկույցի
- «Նախադեպային իրավունքը արդարադատության իրականացման գործընթացում» զեկույցի

22 հայտարարություն

- Արտակ Ջեյնալյանի աշխատասենյակի վրա հարձակում կատարելու վերաբերյալ
- ՀԿ-ների հայտարարությունը ԱԼԳ ազգային պլատֆորմի վերաբերյալ
- «Լոռի» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր Նարինե Ավետիսյանին պատկանող ավտոմեքենայի հրկիզման վերաբերյալ
- Տիգրան Փոստանջյանի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու վերաբերյալ
- «Ա1+» հեռուստաընկերությանն աջակցող «Ժողովրդական հեռուստատեսություն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների հայտարարությունը
- «Ծոմ Ազատության» անվանմամբ հացադուլի ընթացքում ՀԿ-ների կոչը Ռ. Հովհաննիսյանին
- Կարեն Շահբազյանի կողմից դատական իշխանության վրա ճնշումներ գործադրելու վերաբերյալ

- Ընտրական անառողջ քաղաքականություն. ՀԿ-ների համատեղ հայտարարությունը՝ ուղղված ՀՀ կառավարությանը
- 2011 թ. ապրիլի 28-ին Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումները դադարեցնելու վերաբերյալ
- Տիգրան Փոստանջյանի քրեական գործի վերաբերյալ
- ՀՔԱ Վանաձորի գրասենյակի թեժ գծի առկայության վերաբերյալ
- Արման Ենգիբարյանի սպանության վերաբերյալ
- «Օրհուսը Հայաստանում՝ գնահատում է հասարակությունը» թեմայով խորհրդակցության ամփոփման վերաբերյալ
- ՀԿ-ներն ի պաշտպանություն «Ա1+» հեռուստաընկերության
- Սախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հայաստանյան կենտրոնի Շիրակի մասնաճյուղի գրասենյակի հրկիզման փորձի վերաբերյալ
- Բաց նամակ ՀՀ պաշտպանության նախարարին՝ զինվորի առողջական խնդիրների վերաբերյալ
- Ի պաշտպանություն ՀԱԿ-ի ակտիվիստների
- Ի պաշտպանություն Գեորգի Վանյանի
- Բանակում տիրող իրավիճակի վերաբերյալ
- ՀԿ հայտարարությունը՝ Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մասին բանաձևի նախագծի վերաբերյալ
- ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովին անդամակցության ոչ պատշաճ ձևով կազմակերպված ընտրությունների վերաբերյալ
- «Բանակն իրականում» խմբի կողմից ակցիային խոչընդոտելու վերաբերյալ

5 բողոքի ակցիա (մասնակցել է)

- ՀՀ մաքսային օրենսդրության վերջին փոփոխությունների դեմ /Վանաձոր-Գյումրի/
- «Բանակն առանց մարդասպանների /Կառավարության շենքի մոտ/
- «Բանակն առանց մարդասպանների» երկրորդ ակցիա /Կառավարության շենքի մոտ/
- «Բանակն իրականում» /Կառավարության շենքի մոտ/
- Ի պաշտպանություն ռուսաստանցի քաղբանտարկյալների /ՌԴ դեսպանատան մոտ/

Միևնույն ժամանակ Կազմապերպությունն իրականացրել է.

- Բրիտանական ֆիլմերի փառատոնի կազմակերպում
- Մարդու իրավունքների պաշտպանության այգում ծառատունկ
- Մարդու իրավունքների այգու տարածքի մաքրման աշխատանքներ
- Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օրվա կազմակերպում Վանաձորում
- ՀՀ զինված ուժերում 2010 թ. մահացության դեպքերի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմված տեղեկանքը ներկայացվել է Բաց Հասարակության Հիմնադրամների և ԵԱՀԿ երևանյան գրասեն-

յակի կողմից 2011 թ. փետրվարի 22-ին կազմակերպված կլոր սեղանի ընթացքում, որին մասնակցել են ՀՀ ՊՆ, ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներ, միջազգային և տեղական փորձագետներ, ՀԿ ներկայացուցիչներ:

- 2005 թվականից ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանդիսանում է UNITED եվրոպական ցանցի անդամ: Ցանցի կողմից իրականացվող գործողությունների շրջանակում ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացնում է ռասայական խտրականության բոլոր ձևերի դեմ ուղղված ամենամյա միջոցառումներ և 2011 թ. կազմակերպվել է «Ընդդեմ գենդերային խտրականության» խորագրով միջոցառում Վանաձորի հանրակրթական դպրոցների աշակերտների, ԲՈՒՀ-երի ուսանողների համար:

5.3 Դասընթացներ, փորձի փոխանակում

Միջազգային փորձի փոխանակման միջոցառումներ, որոնց 2011 թ. ընթացքում մասնակցել են Կազմակերպության աշխատակիցները			
N	**Մասնակցի անուն ազգանունը**	**Թեման**	**Կազմակերպողը/ ամիս ամսաթիվը**
1.	Տաթևիկ Մատինյան	Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանային երկխոսություն	ՄԻԱՎ-ի գլոբալ հանձնաժողով և իրավունքի քարտուղարություն 2011 թ. մայիսի 18-19, Քիշինև, Մոլդովա
2.	Տաթևիկ Մատինյան	Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորում	Եվրոպական հանձնաժողով և Եվրոպական արտաքին գործողության ծրագիր 2011 թ. նոյեմբերի 28-30, Պոզնան, Լեհաստան
3.	Տաթևիկ Մատինյան	Եվրոպական Պրո Բոնո Ֆորում	PILNET հիմնադրամ 2011 թ. նոյեմբերի 17-18, Բեռլին, Գերմանիա
4.	Արթուր Սաքունց	Քաղաքացիական հասարակության ներգրավում 2011 թ. թափանցիկ և ժողովրդական ընտրություններ ապահովելու գործում	Բաց Էստոնիա հիմնադրամ 2011 թ. մարտի 3-9, Տալին, Էստոնիա
5.	Արթուր Սաքունց	Պլանավորման աշխատանքային հանդիպում, Եվրոպայի խորհրդի կողմից Արևելյան համագործակցության աջակցության ծրագրի շրջանակներում	Եվրոպայի խորհուրդ 2011 թ. ապրիլի 27-28, Ստրասբուրգ, Ֆրանսիա
6.	Արթուր Սաքունց	Մոսկվայի հելսինկյան խմբի հոբելյան	Մոսկվայի հելսինկյան խումբ 2011 թ. մայիսի 10-13, Մոսկվա, Ռուսաստան

7.	Արթուր Սաքունց	«Աջակցելով Հայաստանի քաղաքացիական հասարակության կառույցներին» կոնֆերանսի շարունակություն	Եվրոպական համագործակցություն հանուն ժողովրդավարության կազմակերպություն 2011 թ. մայիսի 24-27, Բրյուսել, Բելգիա
8.	Արթուր Սաքունց	Հետազոտությունների դասընթացի փորձագետ	Միջազգային բանտային բարեփոխումներ 2011 թ. նոյեմբերի 28-30, Թբիլիսի, Վրաստան
9.	Արթուր Սաքունց	Համերաշխության պլատֆորմ և ԵԱՀԿ նախարարների հանդիպման զուգահեռ կոնֆերանս	Եվրոպայի և Եվրասիայի համերաշխության ցանց 2011 թ. դեկտեմբերի 2-6, Վիլնյուս, Լիտվա
Ներպետական փորձի փոխանակման միջոցառումներ, որոնց 2011 թ. ընթացքում մասնակցել են Կազմակերպության աշխատակիցները			
1.	Մարիետա Թեմուրյան Սուզաննա Ղարաղաշյան	«Մարդու իրավունքները և հոգեկան առողջությունը» համաժողով	Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամ 2011 թ. փետրվարի 18
2.	Սուզաննա Ղարաղաշյան Մարիետա Թեմուրյան	«Օպիոիդային դեղորայքի նշանակման, բախշման և տրամադրման ներկայիս քաղաքականության վերլուծության, ինչպես նաև օպիոիդային դեղորայքի նշանակման, բախշման տրամադրման ստանդարտների և ուղեցույցների վերջնական մշակված տարբերակի քննարկում» համաժողով	«Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ 2011 թ. օգոստոսի 19, սեպտեմբերի 7
3.	Մարիետա Թեմուրյան Անահիտ Չիլինգարյան	«Հոգեկան առողջության ոլորտի համայնքային ծառայությունների զարգացման խնդիրները» կոնֆերանս	2011 թ. հունիսի 23
4.	Անահիտ Չիլինգարյան	«ՀՀ-ում բժշկական գաղտնիքի պահպանման ամրապնդումը հիվանդների իրավունքների պաշտպանության համատեքստում»	Առողջապահական և սոցիալական իրավունքների պաշտպանության գիտագործնական կենտրոն
5.	Սուզաննա Ղարաղաշյան Անահիտ Չիլինգարյան	«Առողջապահության ֆինանսավորման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում»	«Ներդաշնակ զարգացում» ՀԿ 2011 թ. նոյեմբերի 30
6.	Մարիետա Թեմուրյան Սուզաննա Ղարաղաշյան	ՁՊՎ-ներում և կալանավայրերում անցկացվելիք մոնիթորինգի գործիքների վերաբերյալ քննարկում	Բաց Հասարակության Հիմնադրամներ 2011 թ. դեկտեմբերի 7
7.	Անի Ղամբարյան	«Լրատվամիջոցներն այսօր» համաժողով	Եվրամիություն-Հայաստան 2011 թ. նոյեմբերի 8-9

Ներպետական դասընթացներ, որոնց 2011 թ. ընթացքում մասնակցել են Կազմակերպության աշխատակիցները			
1.	Մարիետա Թեմուրյան Սուզաննա Ղարաղաշյան Անի Չատինյան Անահիտ Չիլինգարյան	«Ինչպես պատրաստել զեկույց», «Շահերի պաշտպանություն»	ՀՔԱ Վանաձորի գրասենյակի «Երիտասարդների ներգրավումը Հարավային Կովկասի իրավապաշտպանական շարժման մեջ» ծրագրի շրջանակներում 2011 թ. հուլիսի 3-7
2.	Մարիետա Թեմուրյան	«Հաշվետվության կազմում»	«Սոցիոսկոպ» 2011 թ. ապրիլ
3.	Մարիետա Թեմուրյան Սուզաննա Ղարաղաշյան	«Առողջությունը և մարդու իրավունքները»	«Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինք» ՀԿ 2011 թ. հուլիսի 22-24
4.	Մարիետա Թեմուրյան	«Մարդու իրավունքների մոնիթորինգ փակ հաստատություններում՝ նախատեսված այն երեխաների համար, որոնք զրկված են ընտանեկան միջավայրից»	Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստանի կողմից ՀՀ հատուկ դպրոցներում մշտադիտարկման խմբի անդամների համար 2011 թ. նոյեմբերի 1, 2, 4
5.	Մարիետա Թեմուրյան	«Մարդու իրավունքներ ու հաղորդակցում»	Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան ՀՀ հատուկ դպրոցներում մշտադիտարկման խմբի անդամների համար 2011 թ. հունիսի 10-12
6.	ՀՔԱ Վանաձորի գրասենյակի բոլոր իրավաբանները	«Իրավաբանների կարողությունների զարգացում»	ՀՔԱ Վանաձորի գրասենյակ
7.	Անի Չատինյան	«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի կիրառումը ՀՀ դատարանների կողմից»	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ 2001 թ. սեպտեմբերի 19
8.	Արայիկ Ջալյան Անի Չատինյան	«Ռազմավարական դատավարություն/ Եվրոպական դատարան դիմելու կարգը, դիմումներ/»	Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան 2011 թ. հուլիսի 11-15
9.	Արայիկ Ջալյան Անի Չատինյան	«Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ռազմավարական դատավարության իրականացման տեսանկյունից»	Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան 2011 թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2
10.	Անի Ղամբարյան	«Նոր մեդիա գործիքներն ընտրական գործընթացներում»	Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ 2011 թ. հոկտեմբեր

11.	Անի Ղամբարյան	«Նոր մեդիա գործիքները տեղեկատվական արշավների համար»	Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ 2011 թ. փետրվար-մարտ
12.	Անի Ղամբարյան	«Նոր մեդիա գործիքներ»	Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ 2011 թ. հոկտեմբեր
13.	Վարդինե Գրիգորյան	«Վերապատրաստողների վերապատրաստում»	«Տեղեկատվության ազատության կենտրոն» 2011 թ. նոյեմբերի 25-26
14.	Գայանե Հարությունյան	«Ինֆորմացիոն անվտանգություն»	Ինտերնետ քաղաքականության քաղաքացիական նախաձեռնություն 2011 թ. հուլիսի 25-26

6. ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմակերպությունը 2011 թվականի ընթացքում ուղարկել է 309 գրություն ընդհանուր թվով 160 մարմինների:

Ըստ տեսակների դրանք դասակարգվում են հետևյալ կերպ.

Գրության տեսակը	Մարմինների թիվը	Ուղարկված գրությունների թիվը
Տեղեկատվության հարցում	86	193
Դիմում	18	44
Դիմում-բողոք	3	7
Դիմում-խնդրանք	10	10
Դիմում-պահանջ	1	2
Ջեկույցի ներկայացում	1	1
Ծրագրի ներկայացում	5	5
Հաղորդում	2	3
Հաղորդում հանցագործության մասին	1	1
Հայտարարություն	1	1
Հայտարարություն բացարկի վերաբերյալ	2	2
Հայցադիմում	4	4
Միջնորդություն	1	3
Վարչական բողոք	2	3
Վերաքննիչ բողոք	9	12
Վճռաբեկ բողոք	4	8
Մասնակցության հրավեր	10	10

7. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՅԳԻ

2011 թ. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը Տարոն IV թաղամասի բնակիչների, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանում Ամերիկայի ճարտարապետների ինստիտուտի Ֆուլբրայթ կրթաթոշակ ստացած շրջանավարտ Ջեյն Բրիտ Գրինվուդի և ԱՄՆ խաղաղության կորպուսի համայնքային զարգացման ոլորտի կամավոր Քեթլին Լեսթինայի համատեղ ջանքերով սկսեց Վանաձոր քաղաքի Տարոն IV թաղամասում (բնակչությունը 7,756) մարդու իրավունքների այգու ստեղծման աշխատանքները: 2011 թվականի սկզբներին իրականացվեց կարիքի գնահատում, որի արդյունքում պարզվեց, որ Տարոն IV թաղամասին անհրաժեշտ կլինի ունենալ բացօթյա հանգստի վայր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թաղամասը բավականին մեկուսացված է քաղաքից: Ծրագիրը նպատակ ունի.

- ապահովել անվտանգ և բնության մեջ բացօթյա մի միջավայր, որը հասանելի կլինի բոլոր սերունդների ներկայացուցիչներին տարվա բոլոր եղանակներին, այն կխրախուսի ու կնպաստի ազատ ժամանցի ու առողջ ապրելակերպի կազմակերպմանը,
- մարդու իրավունքների այգու միջոցով ապահովել ժողովրդավարության, հանդուրժողականության, այլախոհության և մարդու իրավունքների հիմնարար արժեքների վերաբերյալ համայնքի անդամների իրազեկվածությունը,
- Հայաստանում նման այլ այգիների կառուցման համար ապահովել նախատիպ՝ ապացուցելու, թե ինչպես կարող են տեղական համայնքը և քաղաքացիական խմբերը իրենց ձայնն ունենալ հանրային վայրի նախագծման և օգտագործման գործում:

2011 թ. ընթացքում Մարդու իրավունքների այգու ստեղծման աշխատանքների շրջանակներում իրականացվել են մի շարք գործողություններ, մասնավորապես՝ համայնքում գործող հանրակրթական երկու դպրոցներում անց են կացվել մարդու իրավունքների դասընթացներ միջին դպրոցի աշակերտների հետ, քննարկումներ են իրականացվել համայնքի բնակիչների հետ այգու կարիքների շուրջ, իրականացվել են մաքրման աշխատանքներ թաղամասի երեխաների աջակցությամբ, իսկ 2011 թվականի մայիսի 7-ին այգու տարածքում իրականացվել է ծառատունկ, և տնկվել են ավելի քան 40 ծառեր, որոնք տրամադրվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գուգարքի անտառտնտեսության» մասնաճյուղի կողմից:

2011 թ. նոյեմբերի 12-ին կազմակերպվել է ճարտարապետների հանդիպում, որի նպատակն էր Մարդու իրավունքների այգու նախագծի կազմումը: Ծրագրի նախագիծը կազմվել է ծրագրում ընդգրկված ճարտարապետի կողմից՝ հաշվի առնելով մասնագետների խորհրդատվությունը և համայնքի բնակիչների կարիքները:

Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում որպես խորհրդատու ներգրավվել են ճարտարապետ Սարհատ Պետրոսյանը և Հայաստանի Ամերիկյան համալսարանի դասախոս, շրջակա միջավայրի հարցերով խորհրդատու Ալեն Ամիրխանյանը, որոնց հետ քննարկվել է մարդու իրավունքների այգու նախագծման, աշխատանքի կազմակերպման և իրականացման գործընթացը:

8. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2011 թվականի ընթացքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը իրականացրել է հետևյալ տպագրությունները.

- «**Վկաների պաշտպանությունը. ուսումնասիրություն**» ձեռնարկ-հանդիսանում է «Վկաների պաշտպանություն» ծրագրի[5] արդյունք: Ձեռնարկում ներկայացված են Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում գործող 17 քննչական բաժիններում/բաժանմունքներում իրականացված մոնիթորինգների, ինչպես նաև փաստաբանների և քննիչների կողմից լրացված հարցաթերթիկների ամփոփում: Ձեռնարկում ներկայացված են վկաների քրեադատավարական կարգավիճակից բխող իրավունքների ապահովման վիճակը Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում:
- «**Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախաձեռնած դատական գործերի վերլուծություն**» ձեռնարկ-հանդիսանում է «Նախադեպային իրավունքն արդարադատության իրականացման գործընթացում» ծրագրի արդյունք: Ձեռնարկում ներկայացված են ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2001-2011 թվականների ընթացքում նախաձեռնված և ավարտին հասցված ընդհանուր թվով 20 դատական գործերի իրավական համառոտագրերը, որոնք ենթարկվել են փորձաքննության՝ գնահատելու համար այդ գործերի ազդեցության աստիճանը նախադեպային իրավունքի զարգացման վրա:
- «**Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում**» զեկույց-հանդիսանում է «Կարողությունների զարգացում նյարդահոգեբուժական հաստատություններում մարդու իրավունքների մոնիթորինգի իրականացման համար»[6] ծրագրի արդյունք: Զեկույցում ներկայացված են ՀՀ տարածքում գործող 8 նյարդահոգեբուժական բուժհաստատություններում իրականացված մոնիթորինգի արդյունքները:
- «**Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժօգնություն ստանալու իրավունքը**» տեղեկատվական գրքույկ-տպագրվել է «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացում» ծրագրի շրջանակներում: Գրքույկում ներկայացված են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները, դրանց խախտման դեպքում պաշտպանության և վերականգնման մեխանիզմները:
- «**Թմրամիջոցից կախվածություն ունեցող անձանց բուժօգնություն ստանալու իրավունքը և առաջին բուժօգնություն տրամադրելու միջոցները**» տեղեկատվական գրքույկ-տպագրվել է «ՀՔԱ Վանաձորի

[5] Ծրագիրն իրականացվել է 2010 թվականի օգոստոս-դեկտեմբեր ամիսների ընթացքում ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

[6] Ծրագիրն իրականացվել է 2009-2010 թվականների ընթացքում Բաց Հասարակության Հիմնադրամներ Բուդապեշտի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացում» ծրագրի շրջանակներում: Գրքույկում ներկայացված են թմրամիջոցից կախվածություն ունեցող անձանց իրավունքները, դրանց խախտման դեպքում պաշտպանության և վերականգման մեխանիզմները, ինչպես նաև թմրամիջոցից կախվածություն ունեցող անձանց առաջին օգնության ցուցաբերման ցուցումներ:

- «**Ազատ տեղաշարժի իրավունքը ՀՀ-ում 2011 թվականի ընթացքում**» զեկույց-տպագրվել է «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացում» ծրագրի շրջանակներում: Զեկույցում ներկայացված են ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման դեպքերը 2011 թվականի ընթացքում և դրանց իրավական որակումները:
- «**ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2011 թ. մարդու իրավունքների վերաբերյալ**» զեկույց - տպագրվել է «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացում» ծրագրի շրջանակներում: Զեկույցում ներկայացված են մարդու իրավունքների վիճակը ՀՀ-ում և մասնավորապես Լոռու մարզում:

9. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

2011 թվականին ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ընդլայնել է իր համագործակցության շրջանակները թե՛ միջազգային, թե՛ ազգային մակարդակներում:

- Մասնակցել է 2011 թվականի նոյեմբերի 28-30-ին Լեհաստանի Պոզնան քաղաքում տեղի ունեցած «Արևելյան գործընկերության հարևանության քաղաքականության ֆորումի» 3-րդ հանդիպմանը և ներգրավվել առաջին աշխատանքային խմբի մարդու իրավունքների ենթախմբում: Կազմակերպությունը իր ներդրումն է ունեցել 2011 թվականին Մարդու իրավունքների ենթախմբի կողմից պատրաստված զեկույցի պատրաստմանը:
- Անդամակցել է 2011 թվականի դեկտեմբերին ձևավորված «Արևելյան գործընկերության ազգային պլատֆորմին»:
- Ներգրավվել է Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության կողմից 2011 թվականին ստեղծված Մարդու իրավունքների ցանցում և մասնակցել է ցանցի կողմից Հայաստանի մասով ՀՊԴ (UPR) ստվերային զեկույցի պատրաստմանը:
- Ներգրավվել է Եվրոպայի և Եվրասիայի համերաշխության ցանցում՝ որպես ցանցի հիմնադիր անդամ: Ցանցը պաշտոնապես մեկնարկել է մարդու իրավունքների 35 ՀԿ-ների առանցքային խմբի ռազմավարության պլանավորման հանդիպման ժամանակ, Վիլնյուսում՝ ԵԱՀԿ նախարարական խորհրդի շրջանակներում 2011 թվականի դեկտեմբերի 3-5-ը:
- Ընդլայնել է միջազգային խաղաղասիրական ցանցերի հետ համագործակցությունը և համագործակցության շրջանակներում հանդիսացել է գործընկեր «Երիտասարդ խաղաղասերների միացյալ ցանցի» կողմից նախաձեռնված «Երիտասարդների մասնակցությունը վիրտուալ և միջմշակութային երկխոսության միջոցով» ծրագրին:
- Հանդիսացել է 2011 թվականի սեպտեմբերին ստեղծված «Բանակն իրականում» հասարակական նախաձեռնության հիմնադիր անդամ:
- 2011 թվականին հիմք է դրվել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցությանը, որի նպատակն է նպաստել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը:

Մասնակցել է 2011 թվականի նոյեմբերին Գերմանիայի Բեռլին քաղաքում կայացած PILNET հիմնադրամի կողմից անվճար իրավական աջակցության տրամադրման մշակույթի ձևավորմանը և տարածմանն ուղղված ֆորումին:

10. ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Արթուր Սաքունց
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ
(1998 - առ այսօր)

Մանուշակ Օհանյան
Գլխավոր հաշվապահ
(1998 - առ այսօր)

Հայկուհի Հարությունյան
Իրավական բաժնի համակարգող
(2004 - 2011)

Տաթևիկ Մատինյան
Իրավական բաժնի համակարգող
(2011 - առ այսօր)

Արմինե Սադիկյան
Խաղաղասիրության բաժնի համակարգող
(2002 - առ այսօր)

Օֆելյա Ջալյան
Շահերի պաշտպանության բաժնի համակարգող
(2010 - առ այսօր)

Անի Ղամբարյան
Հասարակայնության հետ կապերի բաժնի համակարգող
(2007 - առ այսօր)

Գայանե Հարությունյան
Համակարգչային սպասարկման մասնագետ
(2011 - առ այսօր)

Վարդինե Գրիգորյան
Թարգմանիչ
(2011 - առ այսօր)

Սիրուն Ղարագյոզյան
Թարգմանիչ
(2011)

Սուրեն Անանյան
Վարչական օգնական
(2009 - առ այսօր)

Մարիետա Թեմուրյան
Մոնիթորինգի մասնագետ
(2007 - առ այսօր)

Սուզաննա Ղարաղաշյան
Պացիենտների իրավունքների մասնագետ
(2008 - առ այսօր)

Անահիտ Չիլինգարյան
Շահերի պաշտպանության մասնագետ
(2010 - առ այսօր)

Արայիկ Ջալյան
Իրավախորհրդատու
(2008 - առ այսօր)

Անի Չատինյան
Իրավախորհրդատու
(2010 - առ այսօր)

Տաթև Սիրադեղյան
Իրավախորհրդատու
(2011 - առ այսօր)

Լուսինե Նգոյան
Ծրագրային օգնական
(2007 - 2011)

11. ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ

	Ֆինանսական միջոցների նկարագրություն	Ֆինանսավորման աղբյուր	2011 թ. ծախսերը ՀՀ դրամով
1	Ներդրումներ	Կազմակերպության անդամներ	35,915.00
2	«Անհայտ կորածների մասին» օրենքի ներառում խորհրդարանի օրակարգ (MATRA)	Նիդերլանդների դեսպանատուն	552,900.00
3	ՔԿՀ-ների հասարակական դիտորդական խմբի գործունեություն (Դ* 16519,17092)	ԲՀԻ աջակցության հիմնադրամ - Հայաստան	17,619,471.00
4	ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ինստիտուցիոնալ զարգացում (Դ*7274)	ԲՀԻ աջակցության հիմնադրամ - Բուդապեշտ	36,178,630.25
5	Բրիտանական ֆիլմերի ներկայացում	Բրիտանական դեսպանատուն	478,662.00
6	ՀՀ ոստիկանության համակարգի բարեփոխումներ	Նորվեգիայի հելսինկյան կոմիտե	10,148,600.80
7	Երիտասարդների ներգրավումը Հարավային Կովկասի իրավապաշտպանական շարժման մեջ	NED	14,303,514.40
8	Քաղաքացիական վերահսկողություն զինված ուժերի նկատմամբ	ICCO	4,818,240.00
9	Նախադեպային իրավունքն արդարադատության իրականացման գործընթացում	ՔՇՊԱԾ	3,284,951.00
10	ՀՀ քրեական քաղաքականության բարեփոխումների առաջարկություններ մարդու իրավունքների համատեքստում	ՔՇՊԱԾ	1,478,136.00
11	Կարողությունների զարգացում նյարդահոգեբուժական հաստատություններում մարդու իրավունքների մոնիթորինգի իրականացման համար	ԲՀԻ աջակցության հիմնադրամ - Բուդապեշտ	2,435,063.00
12	Վկաների պաշտպանություն	ԵԱՀԿ երևանյան գրասենյակ	2,191,075.10
13	Իմացի՛ր քո իրավունքները	Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ	344,728.00
	Ընդհանուր		**93,869,886.55**